Մեզ պէս ազգի համար՝ գիւղական վարժապետի տեղը վսեմ նշանակութիւն ունի։ Գիւղական վարժապետի վրա պէտք է նայել ինչպէս մեծ պաշտօնի վրա կանգնած մեծ մարդի վերայ։ Նա ապագայ ժամանակի քաղաքակրթութեան հիմնադիրն է։...

Մեզ պէս ազգի բարոյական վերականգման համար գիւղական վարժապետը չը պէտք է մարմին լինի՝ ինչպէս հասարակ մահկանացու՝ այլ հոգի անձնազոհութեան՝ սուրբ հոգի՝ որ առաջնորդում է իդէալական բարձր մտքերի զարգացման. ինչպէս սուրբ հոգի էին քրիստոնէութիւն տարածող առաքեալները։

Մեր գիւղացին վարժապետից սպասում է ամենը. նա նորան տուել է միշտ իւր մէջ առաջին տեղը տէրտէրի կշտին. այդ նշանակում է՝ գիւղի հոգևոր տիրոջ կշտին դնել նորա քաղաքական տէրը։ Բայց գիւղական վարժապետը դեռ երբէք չէ արժանացել այդ տեղին։

Գիւղական վարժապետը գիւղի մտաւորական զարգացման առաջնորդն է։ Նա ձմեռները սովորեցնում է աշակերտներին ուսումնարանումը. երեկոները գտնվում է գիւղական ժողովներումը. այնտեղ նա նորանց կը պատմէ այլ աշխարհների բախտաւոր գիւղացիների պատմութիւնները. թէ ինչպէս նորանք հասել են բարօրութեան այդ աստիճանին. ո՛վ է գիւղացու թշնա-